

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ԳՆԱՃԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ***


Արևիկ Ալեքսանյան

Բանալի բառեր` գնաձ, գնաձի նպատակադրում, փողի ագրեգատների նպատակադրում, ներգրավվող ավանդներ, բանկային տոկոսի հաշվարկային դրույք, տնտեսական աճ, ԴՎԲ ծրագիր, գնաձի հաշվետվություն, դոլարայնացում:

ԼՂՀ բանկային համակարգը միամակարդակ է, այսինքն` այստեղ գործում են միայն առևտրային բանկեր, ուստի չկա դրամավարկային քաղաքականություն իրականացնող պետական մարմին: ՀՀ-ում դրամավարկային քաղաքականություն է իրականացնում ՀՀ ԿԲ-ը: Այդ իսկ պատճառով ուսումնասիել ենք »Գնաձի նպատակադրման ռազմավարության հիմնախնդիրները ՀՀ-ում« թեման:

1991թ. անկայխություն ձեռք բերելուց հետո ՀՀ ԿԲ-ն առաջ կանգնեց բազում խնդիրների առաջ, որոնցից մեկն էր գերգնաձը: Բավական է նշել, որ 1993թ. ՀՀ-ում ՍԳԻ-ն կազմում էր 11000%: [1] Գերգնաձին նպաստում էին բազում գործոններ, որոնցից կարևորներն էին` տնտեսական շրջափակումը, երկրաշարժը, սեփական արժույթի ընդունման ուշացումը և այլն: Խնդիրը մասամբ կարգավորվեց 1994թ., երբ ՀՀ ԿԲ-ն անցավ փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության: Իսկ 2006թ. հունվարի 1-ից ԱՊՀ երկրներից առաջինը անցում կատարեց գնաձի նպատակադրման ռազմավարության:

Հասկանալու համար, թե որ ռազմավարությունն է ավելի ընդունելի ՀՀ համար, անհրաժեշտ է կատարել մանրամասն վերլուծություններ: Գծագրի միջոցով ներկայացնենք գնաձի և փողի զանգվածի փաստացի և ծրագրային ցուցանիշները ՀՀ-ում փողի ագրեգատների և գնաձի նպատակադրման ռազմավարությունների ժամանակ:



Գծապատկեր 1

* Հոդվածն ընդունվել է 22.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ռ. Մանգասարյանը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016


Այստեղից պարզ է դառնում, որ փողի ազրեգատների նպատակադրման ռազմավարություն իրականացնելիս 1996-2005թթ-ին գնաճի ծրագրված մակարդակը համարյա միշտ գերազանցել է փաստացի մակարդակին: Բացառություն է կազմում 2003թ., որի ժամանակ փաստացի արձանագրված 8.6% գնաճից 5.6%-ը պայմանավորված էր միջազգային շուկայում ցորենի գնի բարձրացմամբ: Չնայած դրան՝ փողի ազրեգատների նպատակադրման ռազմավարությունն ուներ մի շարք թերություններ: Պատճառն այն էր, որ, համաձայն փողի ազրեգատների նպատակադրման ռազմավարության, գնաճի ցուցանիշին կարելի է հասնել փողի ազրեգատների նպատակային մակարդակների ապահովման պարագայում, սակայն ՀՀ-ում խիստ դժվարացել էր գնաճի նպատակային ցուցանիշի և փողի ազրեգատների նպատակային ցուցանիշների միաժամանակյա ապահովումը: Այս պարագայում ՀՀ ԿԲ-ն ընտրեց գնաճի նպատակադրման ռազմավարության անցնելու ուղին:

Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ ՀՀ ԿԲ-ը գնաճի նպատակադրման ռազմավարություն իրականացնում է տոկոսադրույք-միջանկյալ նպատակ-վերջնական նպատակ շղթայի տեսքով: Յուրաքանչյուր եռամսյակ ԿԲ-ը հաստատում է գնաճի հաշվետվություն, որտեղ ներկայացվում են.

1. նախորդ եռամսյակի փաստացի գնաճի ցուցանիշը և շեղումների պատճառները,
2. հաստատվում է հաջորդ եռամսյակի ԴՎԲ ծրագիր, այսինքն՝ հաջորդ 12 ամիսների գնաճի կանխատեսումները, դրամավարկային քաղաքականության ուղղությունները և օրենքով նախատեսված այլ դրույթներ: [2]

Ներկայացնենք նույն տվյալները 2006-2014թթ. համար:

Գնաճի և փողի զանգվածի փաստացի և ծրագրված ցուցանիշները
ՀՀ-ում 2006-2014թթ.



Գծապատկեր 2

Այս գծագրից երևում է, որ 2006-2014թթ. ընթացքում 2006, 2009 և 2010թթ-ին գնաճի փաստացի մակարդակները գերազանցել են կանխատեսված ցուցանիշներին: Սակայն դա ունի իր օբյեկտիվ բացատրությունը: Պատճառը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էր, որը ՀՀ տնտեսություն թափանցեց արդեն 2008թ. հոկտեմբերին՝ բացասաբար ազդեցություն թողնելով տնտեսությունը բնութագրող բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների վրա: ԿԲ-ը ձեռնամուխ եղավ իրականացնելու մի շարք բարեփոխումներ: 2009թ. Կառավարության հետ մշակված հակաճգնաժամային միջոցառումները թույլ տվեցին առավելագույնս մեղմել համաշխարհային ճգնաժամի բացասական

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016


հետևանքները: Արդյունքում՝ 2010թ. գրանցվեց 2.2 % տնտեսական աճ: Այնուհանդերձ 2010թ. սկզբին ԿԲ-ը կանգնեց համաշխարհային ձգնաժամի մեկ այլ՝ բարձր գնաճի զսպման խնդրի առջև: ՀՀ-ում գնաճային միջավայրը պայմանավորող հիմնական գործոնները հանդիսացան միջազգային շուկաներում գների աճը, դրամի արժեզրկման դրսևորումները և նախորդ տարում իրականացրած՝ տնտեսության աճին նպաստող, ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները: Դրա հետևանքով 2010թ. գնաճի մակարդակը կազմեց աննախադեպ բարձր 9.4 %, որը 1998թ-ից գրանցված գնաճի մակարդակի ամենաբարձր ցուցանիշն էր:

Հաջորդող տարիները ավելի բարենպաստ էին ՀՀ տնտեսության համար: 2011թ. արձանագրվեց 4.7% տնտեսական աճ: Գնաճի մակարդակը նույնպես կազմեց 4.7%, որը գտնվում էր թույլատրելի միջակայքում: Արդեն 2012թ-ից պարզ դարձավ, որ ՀՀ-ը կարողացել է հաղթահարել համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամը, ինչի մասին են վկայում 2012թ. արձանագրված 4.2 % տնտեսական աճը և 3.2 % գնաճի մակարդակը:

2012-2014 թվականներին ամբողջությամբ վերափոխվել է Կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգը՝ սկսած տվյալների համակարգումից և մոդելային համակարգից մինչև որոշումների կայացում և հասարակության հետ հաղորդակցում: Մասնավորապես ընդլայնվել է հրապարակվող հիմնական կանխատեսումների հորիզոնը՝ նախկին 1-ի փոխարեն 3 տարի: Ներդրվել է գնաճի եռամսյակային կանխատեսումների նոր մոդել, որոնք առավել ճշգրիտ են ներկայացնում տնտեսության ընդհանուր զարգացումները: Բարեփոխվել են հաշվետվություններն ու այլ հրապարակումներ, որոնք առավել մատչելի են դարձնում վարվող դրամավարկային քաղաքականության մատուցումը:

ՀՀ ԿԲ-ը կիրառում է բանկային տոկոսի հաշվարկային դրույք գործիքը, որի միջոցով անուղղակիորեն կարողանում է ազդել գնաճի մակարդակի վրա: Այսպես, եթե ԿԲ-ն ավելացնում է բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, ապա առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ավելի են բարձրանում, ինչը կրճատում է շրջանառության մեջ գտնվող փողի քանակը, հետևաբար նաև՝ գնաճի մակարդակը: Այժմ ներկայացնենք, թե ինչպես է փոփոխվել բանկային տոկոսի հաշվարկային դրույքը փողի ազդեցատների նպատակադրման և գնաճի նպատակադրման ռազմավարությունների ժամանակ:

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքի, առևտրային բանկերի ներգրավված ավանդների և տրամադրած վարկերի միջին տոկոսադրույքների դինամիկան 2000-2014թթ.[3]



Գծապատկեր 3

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

2000-2005թթ. բանկային տոկոսի հաշվարկային դրույքը միջինում կազմել է 18.2 %, իսկ միջին գնաճը նույն ժամանակաշրջանում՝ 2.6%: Իսկ 2006-2014թթ-ին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 12.26 % և 5.54 %: Ստացվում է, որ բարձր տոկոսադրույքի պայմաններում ԿԲ-ը կարողնանում է հասնել գնաճի ցածր մակարդակի: Սակայն ԿԲ-ը չի բարձրացնում այդ գործիքի տոկոսադրույքը՝ տնտեսությունում ներդրումների ծավալների կրճատման պատճառով, ինչը բացասաբար է անդրադառնում ամբողջ տնտեսության վրա:

Գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման ժամանակ կարևոր ցուցանիշներ են համարվում նաև ԿԲ-ի կողմից ֆինանսական շուկայում իրականացվող գործառնությունների տոկոսադրույքները, որոնց դինամիկան 2003-2014թթ. ներկայացված է աղյուսակ 1-ում:


Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները[4]

Աղյուսակ 1

Տարիները	Ռեպո համաձայնագրեր	Ներգրավվող ավանդներ	Լոնբարդային ռեպո
2006	4,04	1,07	10,5
2007	4,85	1,85	7,85
2008	7,583	3,75	9,75
2009	6,375	3,625	9,375
2010	6,25	3,25	10,107
2011	8,045	4,95	10,95
2012	8	5	11
2013	7,75	6,25	9,25
2014	7,29	7	9

Որպեսզի ավելի պարզ և հասկանալի լինեն նշված ցուցանիշները, ինչպես նաև որոնց դինամիկան վերլուծության ենթարկելու համար, այդ նույն տվյալները ներկայացնենք գծապատկերի տեսքով:

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները



Գծապատկեր 4


ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

2006-2014թ. ռեպո համաձայնագրերի միջին տոկոսադրույքը կազմել է 6.67%, ներգրավվող ավանդների միջին տոկոսադրույքը՝ 4,08 %, իսկ լոմբարդային ռեպոյի միջին տոկոսադրույքը՝ 9.75 %: Այդ գործառնությունների միջին տոկոսադրույքները ձգնաժամի տարիներին անկում են ապրել, սակայն հետագայում, երբ ԿԲ-ն իրականացրել է ավելի կոշտ դրամավարկային քաղաքականություն, տոկոսադրույքները սկսել են բարձրանալ և ներկայում դրսևորում են կայուն դինամիկա:

Լյժմ ներկայացնենք գնաճի և տնտեսական աճի դինամիկան 1996-2014թթ. համար:

Գնաճի կանխատեսված ու փաստացի մակարդկաները և տնտեսական աճը

ՀՀ-ում 1996-2014թթ.[5]



Գծապատկեր 5

Գծապատկերից երևում է, որ փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության իրականացման ժամանակ 1999-2005թթ. միջին տնտեսական աճը կազմել է 10%, իսկ գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման ժամանակ, այսինքն՝ 2006-2014թթ.՝ 4.4 %: Ընդհատ է այդ ցուցանիշի վրա ազդել է համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամը, բայց եթե հաշվի չառնենք այդ տարիները, ապա միջինում տնտեսական աճը 2006,2007,2011,2012,2013,2014թթ. կազմել է 7.2%: Փաստորեն ստացվում է, որ այս դեպքում նույնպես փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության ժամանակ միջին տնտեսական աճը ավելի բարձր էր նրանից, երբ ԿԲ-ն սկսեց իրականացնել գնաճի նպատակադրման ռազմավարությունը:

Ընդգծենք, որ համարյա բոլոր ցուցանիշներով փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության ժամանակ ԿԲ-ը հասել է ավելի մեծ արդյունքների: Սակայն չնոռանանք, որ փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության կիրառումը անհնար էր՝ կապված փողի պահանջարկի կառուցվածքային փոփոխությունների, դոլարայնացման բարձր մակարդակի, արտաքին շոկերի և այլնի հետ:

Գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման ժամանակ ՀՀ ԿԲ-ը դեռևս առերեսվում է մի շարք հիմնախնդիրների, որոնք խոչընդոտում են աշխատանքների ավելի արդյունավետ իրականացումը: Այդ հիմնախնդիրներն են.

1. **Ֆինանսատնտեսական ձգնաժամը:** Այսպես՝ համաշխարհային տնտեսությունը, չնայած հաղթահարում է ֆինանսատնտեսական ձգնաժամի հետևանքները, սակայն դեռևս գտնվում է անկայուն տնտեսական և աշխարհաքաղաքական վիճակում, որն անդրադառնում է նաև Հայաստանի առևտրային գործընկերների վրա: Այս առումով դրամավարկային քաղաքականությունը պետք է պատրաստ լինի

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ձկուն կերպով արձագանքելու գների կայունության այն բոլոր հնարավոր ազդեցություններին, որոնք կարող են ծագել արտաքին աշխարհից:

2. **Ֆինանսական շուկայի թերզարգացվածությունը:** Բավական է նշել, որ ՀՀ ֆինանսական հատվածի ակտիվների 92 %-ը պատկանում է բանկային համակարգին: [6] Դա նշանակում է, որ ֆինանսական շուկայի մյուս մասնակիցների՝ վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, գրավատներ և այլն, զործունեությունը այդքան էլ կատարելագործված չէ, և նրանք չեն կարող ձևավորել առողջ մրցակցություն:
3. **Գյուղմթերքների գների բարձր տատանողականություն:** Ներքին տնտեսության հիմնական խնդիրներից է գյուղմթերքների գների բարձր տատանողականությունը սեզոնայնության և եղանակային պայմանների պատճառով, որը դժվարացնում է գնաձի կառավարումը: Այս առումով Կառավարության նախատեսած միջոցառումները գյուղմթերքի արտահանման խրախուսման ուղղությամբ պետք է, որ նպաստեն ճյուղի կայունացմանը և թույլ տան խուսափել գների նման տատանումներից:
4. **ԴՎՔ կանխատեսման համակարգի անկատարությունը:** ԴՎՔ կանխատեսման համակարգն ինքնին կարիք ունի շարունակական բարելավման, տնտեսագիտական մտքի զարգացմանը և միջազգային լավագույն փորձին համապատասխանելու համար, ինչը պետք է ապահովվի Դրամավարկային քաղաքականության վարչության անձնակազմի կողմից:
5. **Դոլարայնացման բարձր մակարդակ:** Հայաստանի բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների զգալի մասն արտարժույթով է: Ունենալով չափազանց բարձր մասնաբաժին (2000-ականների սկզբին՝ թե՛ ավանդների և թե՛ վարկերի մոտ 80%-ը)՝ դրամի արագ արժևորմանը զուգընթաց այն սկսեց աստիճանաբար նվազել մինչև 40%՝ տասնամյակի երկրորդ կեսին: 2009թ. ձգնաժամից և դրամի արժեզրկումից հետո թե՛ ավանդները և թե՛ վարկերը կրկին դարձան բարձր դոլարայնացված. ներկայում դրանց գրեթե երկու երրորդն արտարժույթով է: [7] Դոլարայնացման բարձր մակարդակը հանգեցնում է ՀՀ դրամի արժեզրկմանը, ինչն էլ հանգեցնում է բարձր գնաձի:
6. **Արտաքին շուկերը և դրանց դիմակայելու սահմանափակ հնարավորությունները:** Ինչպես գիտենք ՀՀ-ը համարվում է ներմուծող երկիր, հետևաբար ներմուծման ապրանքների նկատմամբ գնագոյացման վրա մեր երկիրը ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ: Օրինակ՝ նավթի գների բարձրացումը, ոսկու գների բարձրացումը և այլն, բացասաբար են անդրադառնում տնտեսության վրա՝ առաջացնելով տնտեսական շուկեր:
7. **Հակամենաշնորհային օրենսդրության անկատարություն:** Մի շարք դեպքերում ԿԲ-ը մի քանի ամիսներում կարողանում է հասնել գնաձի ցանկալի մակարդակի, սակայն մեկ կամ մի քանի արտադրողների կողմից այս կամ այն ապրանքների կամ ծառայությունների գների անհիմն բարձրացման հետևանքով գնաձի մակարդակը դուրս է գալիս թույլատրելի սահմաններից և տարին ամփոփվում է բարձր գնաձով: Այս երևույթն իրենից ներկայացնում է ներքին շուկ, որը նույնպես ԿԲ-ը չի կարողանում հաղթահարել, քանի որ պետությունը պետք է իրականացնի ճիշտ և արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականություն:
8. **Մրցակցության բացակայություն:** Դա ևս կապված է հակամենաշնորհային ոչ արդյունավետ քաղաքականության հետ, քանի որ ՓԲԶ-ն ստիպված իրենց գները համապատասխանեցնում են խոշոր կազմակերպությունների գներին:

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

9. **Կոռուպցիայի բարձր մակարդակ:** ՀՀ-ում կան այնպիսի պետական հիմնարկներ, որոնք պետք է ապահովեն առողջ մրցակցություն և պատժեն անբարեխիղճ մրցակցությունը, սակայն այդ կառույցների գործունեությունը նույնպես կասկածի տակ է դրված:

Անհրաժեշտ է մշակել այնպիսի մոդել, որի դեպքում ԿԲ-ը կարողանա կառավարել ամբողջ գործընթացը՝ ըստ սահմանված պլանի: Մեր կարծիքով՝ այդպիսի մոդելի կառուցման համար պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները.

1. Իրականացնենք այնպիսի քաղաքականություն, որի դեպքում ԿԲ-ը կկարողանա կառավարել արտարժույթի կուրսը՝ շարունակելով կիրառել լողացող կուրսի քաղաքականություն, քանի որ ներկայումս արտարժույթի շուկայում գները ձևավորվում են ոչ մրցակցային պայմաններում:
2. Շարունակենք իրականացնել գնաձի նպատակադրման ռազմավարության առջև դրված նախապայմանների կատարումը, մասնավորապես միջոցառումներ իրականացնել, ֆինանսական շուկայի բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններ ապահովելով՝ ունենալ զարգացած ֆինանսական շուկա:
3. Պետք է իրականացնենք Կենտրոնական բանկի, միջազգային ֆինանսական կառույցների և այլ երկրների կենտրոնական բանկերի միջև դրամավարկային քաղաքականության ռազմավարական խնդիրների փորձի փոխանակում: Մասնավորապես կոնֆերանսների, սեմինարների, տարբեր թեմաներով փորձագիտական նյութերի քննարկում:
4. Անհրաժեշտ է կատարելագործել հակամենաշնորհային օրենսդրությունը, հավասար մրցակցային պայմաններ ապահովել բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար, ինչպես նաև ավելի մեծ ջանքերով պայքարել կոռուպցիայի դեմ:
5. Պետք է ընդլայնել ՀՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի լիազորությունների շրջանակները, որպեսզի հանձնաժողովի գործունեությունը ունենա որոշակի արդյունքներ:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ գնաձի նպատակադրման ռազմավարության միջոցով ԿԲ-ի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում մակրոտնտեսական կայունության և երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի ապահովման համար, և, որպես անկախ դրամավարկային քաղաքականության ամենաառաջադեմ ռազմավարություն, իր կենսունակությունն է ապացուցել նույնիսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «ՀՀ ԿԲ-ի ԿԲՀԿ համակարգը», Եր., 2010, էջ 7:
2. ՀՀ օրենքը «ՀՀ ԿԲ-ի մասին», Հոդված 6:
3. ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագրեր», Եր., 2000-2014:
4. ՀՀ ԿԲ-ի պաշտոնական տվյալներ, www.cba.am/am/sitePages/fmompinterestrates.aspx
5. ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագրեր», Եր., 1996-2014թ., ԱՎԾ պաշտոնական տվյալներ:
6. Նույն տեղում:
7. Ասիական զարգացման բանկի «Երկրի գործընկերության ռազմավարություն. Հայաստան. 2014-2018» ուսումնասիրություն, <http://wcm.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ea-hy.pdf>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնախնդիրները ՀՀ-ում
Արևիկ Ալեքսանյան

Հայտնի է, որ յուրաքանչյուր պետության տնտեսությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է ՀՆԱ-ն, գնաճի մակարդակը և գործազրկությունը: Վերջին տարիներին աշխարհի բոլոր երկրների համար հիմնախնդիր է գնաճի թույլատրելի մակարդակի ստեղծումը և պահպանումը: Մեր պետությունը բացառություն չէ, և այդ նպատակով ԿԲ-ը իրականացնում է մի շարք միջոցառումներ, իսկ 2006թ. հունվարի 1-ից, ԱՊՀ երկրներից առաջինը, փողի ազդեցատների նպատակադրման ռազմավարությունից անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարության: Չնայած ձեռք բերած հաջողություններին՝ դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել և համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ցանկալի արդյունքի հասնելու նպատակով:

РЕЗЮМЕ

Основные проблемы таргетирования инфляции в РА
Аревик Алексанян

Ключевые слова: инфляция, таргетирование инфляции, таргетирования денежных агрегатов, депозиты, ставка банковского процента, экономический рост, план денежно-кредитной политики, обзор инфляции.

Главные показатели, характеризующие экономику каждой страны, являются ВВП, уровень инфляции и безработицы. В последние годы основной проблемой для всех стран является создание и поддержание приемлемого уровня инфляции. В этом смысле наша страна не исключение и для достижения этой цели ЦБ РА осуществляет ряд мер. С 1-го января 2006 года Армения – первая из стран СНГ, сделавшая переход на таргетирование инфляции. Несмотря на достижения, есть еще ряд вопросов, которые должны быть изучены, чтобы предпринимать соответствующие меры и чтобы добиться желаемого результата.

SUMMARY

The Main Problems of Inflation Targeting in the RA
Arevik Aleksanyan

Keywords: inflation, inflation targeting, targeting monetary aggregates, deposits, bank interest rate, economic growth, the plan of the monetary policy, inflation report.

GDP, inflation and unemployment are the main indicators characterizing the economy of each country. The creation and maintenance of the acceptable inflation level has recently become a major challenge for all countries. In this sense, our country is not an exception, and certain measures are being carried out by the Central Bank of the RA for the achievement of this objective. Armenia is the first of the CIS countries who has adopted the inflation targeting. Despite the achievements, there are still issues which should be subjected to analysis for carrying out further appropriate measures and achievement of the desired result.